ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022թթ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 13-ին ՀՀ գլխավոր դատախազությունում (այսուհետ՝ Դատախազություն) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում Հայտերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

1. Դատախազության ներկայացրած Հայտերը չեն բխում Կառավարության քաղաքականության ընդհանուր նպատակներից և թիրախներից, մասնավորապես՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված Կառավարության ծրագրից: ***Օրինակ 1.*** Դատախազության կողմից ներկայացված Հայտերում «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում հղում չի կատարվել որևէ իրավական ակտի: Ստացվում է, որ Դատախազությունը իր Հայտերը մշակել է առանց իրավական հիմնավորումների և հստակ տեսլականի:[1] Մինչդեռ անհրաժեշտ էր հղում տալ Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրին, մասնավորապես՝ 3-րդ «ՊԱՅՔԱՐ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ» բաժնին և 4.1-րդ «ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» բաժնին: ***Օրինակ 2.*** Հայտերի 2-րդ մասում ներկայացված նյութը չի համապատասխանում Ցուցումներով նախատեսված պայմաններին, այն է. «Ներկայացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ում քաղաքականության հիմնական նպատակները և թիրախները: Նպատակները սահմանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ նպատակները պետք է կապվեն ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի հետ և բխեն ՀՀ կառավարության քաղաքականության ընդհանուր նպատակներից և թիրախներից: ***Օրինակ 3.*** Նպատակները պետք է լինեն շարունակական ու կայուն՝ առնվազն միջնաժամկետ հատվածում, իսկ դրանց ձևակերպումը պետք է լինի հստակ և հնարավորինս սեղմ՝ 1-2 նախադասությամբ: Հայտերում բացակայում են նպատակների շարունակական լինելը հիմնավորող դրույթները:

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1:</u> Առաջարկում ենք Դատախազության ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել՝

- Կառավարության ծրագրով[2] և Կառավարության 2019թ. մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով: Հիշյալ որոշման N 1 հավելվածով հաստատվել է նաև ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը (այսուհետ՝ Ցանկ), որով Դատախազությունը սահմանված ժամանակահատվածում պետք է իրականացնի միջոցառումներ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, էլեկտրոնային

[1] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/Byuje2020%20MGCC.pdf

[2] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/files/docs/3133.pdf

արդարադատության միասնական համակարգի (e-justice.am) մշակմանը և ներդրմանը, հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդրմանը[3]:

- Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հոդված 1-ի (e) նպատակով, 4-րդ, 12-րդ, 16-րդ հոդվածներով[4], և ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ, որի հավելվածի ճանապարհային քարտեզի «Արդարադատություն, ազատություն և անվտանգություն» վերտառությամբ Մաս 3-ով՝ Դատախազությունը պետք է իրականացնի որոշակի միջոցառումներ[5]:

- «ՀՁՆ-2030 օրակարգ ՄԱԿ-ի հռչակագրի»[6] այն դրույթներով, որոնք վերաբերելի են Դատախազության որդեգրած ռազմավարական հիմնական ուղենիշերին և թիրախներին:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

2. Հայտերի ծրագրերում սահմանված միջոցառումների համար նախատեսված չեն արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշներ, որոնք պետք է բխեն և համապատասխանեն ծրագրերում սահմանված թիրախներին և նպատակներին: Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր նպատակի նկարագրության հետ միասին պետք է ներկայացվեն նաև դրանց գծով վերջնական արդյունքի չափորոշիչներ և թիրախային ցուցանիշներ: ***Օրինակ 1.*** Հայտերի 3-րդ մասում ներկայացված նյութը չի համապատասխանում Մեթոդական ցուցումներով (այսուհետ՝ Ցուցումներ) նախատեսված պայմաններին, այն է. «Ներկայացնել ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղություններն և դրանց միջև գերակայությունները»: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծախսային գերակայությունների սահմանումը ենթադրում է, որ ՄԺԾԾ ժամանակահատվածում բնագավառին հատկացվելիք լրացուցիչ միջոցներն առաջին հերթին բաշխվելու են առավել գերակա ուղղությունների միջև: Այդ նպատակով, անհրաժեշտ է առանձնացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում բնագավառում իրականացվելիք ծախսերի առավել գերակա 4-5 ուղղությունները և ներկայացնել դրանք: Վերջիններս պետք է ներկայացվեն կոնկրետ միջոցառումների տեսքով, ըստ գերակայությունների նվազման հաջորդականության: Անհրաժեշտ է հիմնավորել գերակայությունների սահմանման տրամաբանությունը՝ այդ թվում սահմանված նպատակների և թիրախների ապահովման նպատակով լուծման կամ կարգավորման ենթակա խնդիրների առաջնահերթությամբ, որոնք իրենց հերթին պետք է հիմնավորվեն ՀՀ կառավարության ոլորտային քաղաքականության միտումներով: Ցուցումներով սահմանված ամենաշատը 1 էջի փոխարեն այս մասը ներկայացված է շուրջ 2 էջի վրա: ***Օրինակ 2.*** Լրացված չէ Հայտերի 6-րդ բաժինը, որը վերաբերվում է տարածքային զարգացմանն առնչվող ծրագրերին/միջոցառումներին: ***Օրինակ 3.*** Հայտերի 3-րդ հավելվածի 3-րդ մասում՝ «Պետական մարմնի ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները» բաժնում նշված վերջնական արդյունքային ցուցանիշները կապված չեն Աշխատակազմի տվյալ ժամանակահատվածի ռազմավարական նպատակադրումների հետ: ***Օրինակ 4.*** Հայտերի 3-րդ հավելվածի 2-րդ մասում «Պետական մարմնի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերը և միջոցառումները» վերջնական արդյունքները չափելի չեն և առանց նկարագրության են: ***Օրինակ 5.*** Հայտերի 3-րդ հավելվածի

---

[3] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQN0Qh2i0TwCBijS7C9NMEG38_fbA5AADHXixEDDY-cY

[4] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf :https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf :

[5] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf :

[6] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.un.am/hy/p/sustainabledevelopmentgoals :

4-րդ մասում՝ «Պետական մարմնի գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները» բաժնում ներկայացված են մեծ թվով քանակական կատարողական, 3 ժամկետային և 4 որակական ցուցանիշներ, որոնք հիմնականում կապված են «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գործունեության հետ: Բացակայում են աշխատակազմի գործունեությունը բնութագրող կատարողական ցուցանիշները: ***Օրինակ 6.*** Հայտերի 1144 ծրագրի 11001 միջոցառման մեջ վերապատրաստումներ անցնող փորձագետների թիվը նույնն է 2020-2022թթ. բոլոր երեք տարիների համար: Մինչդեռ ակնհայտ է, որ եթե փորձագիտությունների թիվը աճում է՝ պայմանավորված նոր տեսակի փորձաքննություններով կան դրանց ենթատեսակներով, ավելանում են նաև փորձագետի վարույթում գտնվող փորձագիտական եզրակացությունների տրամադրման թվաքանակը, որոնք արդյունավետ և որակյալ իրականացնելու համար անհրաժեշտ է վերապատրաստել փորձագետներին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1: Հայտնի է, որ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ևս փորձաքննությունների մատուցման ծառայություններ է մատուցում: Առաջարկում ենք փորձաքննությունների վերաբերյալ արդյունքի չափորոշիչները սահմանելիս անդրադառնալ փորձաքննությունների այն տեսակներին, որոնք մատուցում է միայն Նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ը:[7]

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2: Հայտերի 3-րդ հավելվածի 4-րդ մասում 1087 ծրագրի շրջանակներում «քրեական հետապնդման և հարուցման գործերի թիվ, հատ» դաշտը բացակայում է, ինչի արդյունքում հնարավոր չէ կատարել իրատեսական, շոշափելի և չափելի կանխատեսումներ դատախազական համակարգի աշխատողների ծանրաբեռնվածության, հաստիքների թվաքանակի և աշխատավարձների հիմնավորվածության վերաբերյալ: Անհրաժեշտ է լրացնել բացակայող տեղեկատվությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3: Առաջարկում ենք Հայտերի 1144 ծրագրի շրջանակներում վերապատրաստումները իրականացնել վերապատրաստվող ծառայողների թվաքանակը ավելացնելով: Ինչպես նաև ծառայողների շրջանում անցկացնել կարիքների գնահատում՝ պարզելու վերապատրաստման դասընթացների բովանդակային մասը, դասերի թեմաները՝ հիմնվելով նրանց մոտ առկա գործնական գիտելիքների պակասից կամ դրանց բարելավման անհրաժեշտությունից: Վերապատրաստումները իրականացնել հաշվի առնելով փորձագետների կարողությունները՝ կապված պարզ, միջին, բարդ փորձաքննությունների տեսակների հետ: Անհրաժեշտ է բոլոր հիմնավորումները ներառել Հայտերում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.4: Հայտերի 1087 ծրագրի նպատակ և վերջնական արդյունքները համապատասխանում են իրար, բայց սահմանված միջոցառումները ենթադրում են այն ծախսերը, որոնք առաջանում են դատախազական համակարգի աշխատակիցների լիազորություններով պայմանավորված: Առաջարկում ենք միջոցառումները նախատեսել դատախազական համակարգում նորարարական լուծումներ ներդնելով՝ շեշտադրում կատարելով հարցաքննությունների տեսա-ձայնագրման և արխիվացման ինստիտուտի վրա:

---

[7] Հիմնավորում: Անհրաժեշտ է հստակեցնել մոտեցումը. փորձաքննությունների ծառայությունների մատուցման տրամադրումը ամբողջ ծավալով իրականացնելու է մե՞կ ՊՈԱԿ, թե՞ մրցութային կարգով ևս կարող է լինել: Պետք է հաշվի առնել, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի և ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը բնույթով նույնն է: Արդյո՞ք կան փորձաքննությունների հատուկ տեսակներ, որոնք տրամադրվում են միայն մեկ մարմնի կողմից, ո՞ր ՊՈԱԿ-ն է իրականացնում փորձաքննությունները՝ տարանջատելով պարզ, միջին, բարդ աստիճանի փոձաքննությունները, և արդյոք ունի համապատասխան մասնագիտական կոմպետենցիայով փորձագետներ: Ակնհայտ է, որ այս հանգամանքներն են որոշում փորձագիտական եզրակացությունների որակը, ներկայացված ծախսային միջոցների անհրաժեշտությունը, արդարացիությունը, ինչպես նաև քրեական գործերով քննության արդյունավետությունը:

Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

3. Հայտերում նախատեսված են իրականացվելիք ծախսերի առավել գերակա ուղղությունները, որոնք ներկայացված չեն կոնկրետ միջոցառումների տեսքով, մասնավորապես առկա են ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվելիք միջոցառումներն ամբողջությամբ պահպանման ծախսեր են իրենցից ենթադրում: Ծրագրերով սահմանված նպատակներին և իրականացվելիք միջոցառումներին համապատասխան՝ անհրաժեշտ է ֆինանսական ծախսերը նախատեսել հստակ, հիմնավորված, ճշգրիտ հաշվարկներով և հնարավորինս իրական կանխատեսումներով: ***Օրինակ 1.*** Չի կատարվել Ցուցումների պահանջն առ այն, որ հայտատու մարմինները պետք է ներկայացնեն նաև ՄԺԾԾ հատվածում պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը՝ Ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 12-ով ներկայացված ձևաչափին համապատասխան: ***Օրինակ 2.*** Հայտերի 7-րդ բաժնում բացակայում է Աշխատակազմի ֆինանսավորման արտաքին աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը: ***Օրինակ 3.*** Հայտերի 8-րդ բաժնում պատշաճ կերպով չեն ներկայացվել 2020-2022թթ. ժամանակահատվածի համար պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները): Ցուցումների 3-րդ մասում 10-րդ և 11-րդ հավելվածներում ներկայացված աղյուսակները չեն համապատասխանում սահմանված ձևաչափերին: ***Օրինակ 4.*** Հայտերի Հավելված N 3-ի «Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափը» լրացվել էր Ցուցումների՝ ծրագրային բյուջետավորմանը ներկայացվող պահանջների խախտումներով: Այն լրացնելու ժամանակ հաշվի չեն առնվել Ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման» և «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկները: ***Օրինակ 5.*** Հայտերի 1-ին մասում ներկայացված էին նախորդ միջնաժամկետ հատվածում Աշխատակազմի կողմից իրականացված միջոցառումներ՝ առանց տրամաբանական կապի ու զարգացման միտումների ներկայացման: Ավելին, ի հակասություն Ցուցումների, Հայտի 1-ին մասում ներկայացված չէին Աշխատակազմի պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով առնվազն վերջին երեք տարիների (2017–2019թթ.) զարգացման դինամիկան ու միտումները՝ ֆինանսական ցուցանիշների մակարդակով:

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.1:</u> Առաջարկում ենք հաշվարկել, թե ինչքան է կազմում մեկ փորձագետի վարձատրությունը՝ հիմք ընդունելով աշխատանքի վրա ծախսված ժամանակը, ամսական փորձաքննությունների քանակը, փորձաքննության բարդության աստիճանը և այլն: Ըստ այդմ պարզել մեկ փորձագետի միջին վարձատրության չափը և «փորձագետ» հաստիքի համար Հայտերում ներառել ֆինանսական հիմնավորված ցուցանիշներ:

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.2:</u> Հայտերում 3-րդ հավելվածի 2-րդ մասում 1087 ծրագրի շրջանակներում 4,065,324,700 ՀՀ դրամ է նախատեսվել դատախազության բյուջեի համար 2018թ.-ին, որի 2 տոկոսը՝ պահուստային ֆոնդը, կազմել է 81 մլն՝ չկանխատեսված ծախսերի համար: Ըստ աղյուսակի ներկայացված է 85 մլն: Առաջարկում ենք Հայտերում ներառել և ներկայացնել հիմնավորումներ, թե պահուստային ֆոնդից ինչքա՞ն միջոցներ են օգտագործվել և ի՞նչ նպատակներով, արդյո՞ք այդ ծախսերը համապատասխանում են օրենսդրությամբ ամրագրված չկանխատեսված ծախսերի բնույթին:

Այլ դիտարկումներ.

- Ցուցումներով պահանջվող 9-րդ մասը, որը վերաբերվում է Հայտերի հետ կապված ռիսկերին, լրացված չէ: Անհրաժեշտ է լրացնել:
- Հայտերի 3-րդ հավելվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերը լրացված չեն, որոնք ևս պետք է լրացվեն: